

# ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ներկայ 1898 թվականի  
Պիկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ  
» » վեցամսեայ 6 »  
Արտասահմանի » տարեկան 14 »  
» » վեցամսեայ 7 »  
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եղայն դրկել հետեւեալ հասցեով  
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ, ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐՈՒՄ)  
Редакция на вѣстникъ  
„Иравункъ“  
ВАРНА (България).

Rédaction du journal  
„Iravounk“  
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք  
էս չեն դրկուիր եւ յարմար դատաւար  
ներքին կը հրատարակուին անորոշ  
քովին կամ մասամբ:  
Խմբագրութեան տղր 20 սանթիմ. երե-  
փեւ աւելի անգամներու համար 20 0/0  
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

## ՅԱՆՑԱՊԱՐՏԸ

Ճանրորդութեան մը մէջ որ այս  
տողերը գրողին առիթ տուաւ զա-  
նազան տեղերու հայ ժողովուրդին  
ամեն խաւերուն հետ շփուելու, սա-  
տխուր իրողութիւնը հաստատեցի  
թէ մեր ազգակիցներու մեծամաս-  
նութիւնը մեր աղէտները ուղղա-  
կի և պարզապէս կը վերագրէ մեր  
յեղափոխական շարժումներուն, ու-  
րոնց հեղինակն ու սարքիչը կը  
նկատուին միմիայն Ռուսահայերը:

Պատմական հարիւրաւոր փոր-  
ձերով հաստատուած է որ ժողո-  
վուրդը, ամեն տեղ, հանրային ա-  
ղէտներէ ախինջ ազատած՝ հետա-  
մուտ կըլլայ ու է անձի կամ շըր-  
ջանակի վրայ, զոր կարելի ըլլայ  
յանցաւոր պատասխանատուն նկա-  
տել, իր վերաւոր սրտին բոլոր  
զայրոյթն ու դառնութիւնները  
թափել:

Թէեւ բարեբաղդաբար հայ ժո-  
ղովուրդին դատողութիւնը և խառ-  
նուածքը չեն թոյլատրեր իրեն այս  
մասին դիմել այն ծայրայեղու-  
թեանց, որոնք յաճախ տեսնուած  
են ուրիշ միջավայրերու մէջ նը-  
մանօրինակ դէպքերու առիթով,  
սակայն այս պատճառով վտանգա-  
ւոր ըլլալէ չի դադրիր յեղափո-  
խութեան մասին մեր մէջ գոյա-  
ցած գաղափարի այն ընդհանուր  
հոսանքը զոր վերը նշանակեցինք:

Այս հոսանքը որքան ինքնին  
վտանգաւոր՝ այնքան ալ սխալ ըմ-  
բռնումներէ բղխած է, մեր կար-  
ծիքով: Ամեն ուղղամիտ և ուղ-  
ղադատ մարդ պարտական է դի-  
մադրել անոր. այդ կը պահանջեն  
արդարութիւնը և ազգին շահը  
հաւասարադէս:

Մեր դժբաղդութեանց բուն  
պատճառներուն վրայ մեր տեսու-  
թիւնները հինգ վեց ամիս առաջ  
արդէն պարզած ենք, Ողիւղ յաւ-  
տենք վերնագրով յօդուածներու  
շարքի մը մէջ: Այսօր ալ պէտք  
կը զգանք մասամբ կրկներու ինչ  
որ արդէն ըսած ենք:

Ոչ մէկ ժողովուրդ, որ զինք  
նշող բռնապետութեան մը լուծը  
թօթափել փորձած է, կրցեր է

ցարդ ազատ մնալ թշնամիին առ-  
բէն և հուրէն, կամ իր ազատու-  
թիւնը ձեռք ձգել մէկ երկու շա-  
բաթներու: Միայն թէ մեր վը-  
նաններ տարապայման եղան, և  
այս՝ շնորհիւ այսպիսի աննպաստ  
հանգամանքներու, զորս կանխա-  
տեսել կարելի չէր: Ատոնց գլխա-  
ւորն էր Եւրոպայի քաղաքակա-  
նութիւնը: Ուրիշ անգամ ցոյց  
տուինք արդէն որ նոյն իսկ անգ-  
լիական դիւանագիտութեան ղեկա-  
վարը չէր կրցած գուշակել թէ  
քաղաքականութիւնը ամենէն վերջը  
այնքան աննպաստ հանգամանք մը  
պիտի առնէր Հայկական դատին  
համար և թէ խելքի դէմ է պա-  
հանջել մեր յեղափոխութեան վա-  
րիչներէն որ Սալղաթրիէ մը աւե-  
լի հեռաւոր գիւնադէտներ ըլ-  
լային:

Եթէ կուզենք բուն յանցապար-  
տը որոշել, ահա այն է, Եւրո-  
պան է, իր անբարոյական, շա-  
համու քաղաքականութիւնն է:

Եթէ այս ճշմարիտ է, ինքնին  
հերքուած կըլլայ նաեւ այն միւս սը-  
խալ կարծիքը թէ Ռուսահայերն են  
պատասխանատուն մեր դժբաղ-  
դանքանց: Յեղափոխական ու-  
սահայերուն մէջ կրնան գտնուած  
ըլլալ ֆիաստալիտ տարրեր, ինչպէս  
գտնուեցան թրքահայ յեղափոխա-  
կաններու մէջ: Սակայն մասնա-  
ւորներուն գործերուն համար կա-  
րելի չէ պատասխանատու բռնել  
բոլոր ռուսահայ գործիչները, և  
ասոնց համար ալ գործածել պար-  
զապէս ռուսահայ ընդհանուր բա-  
ցատրութիւնը, որ արդէն այնքան  
տկար ժողովուրդի մը քաղաքակա-  
նապէս բաժնուած երկու մեծ մա-  
սերուն միջև ուրիշ տեսակէտնե-  
րով ալ ցաւալի անջատումներ ա-  
ռաջ բերելու միայն կրնայ ծառա-  
յել:

Սակայն միթէ մեր բոլոր խելքը  
և ժամանակը յանցապարտը գըտ-  
նելու միայն պիտի գործածենք:

Այդ բացասական գործունէու-  
թիւն մըն է, որ արական օգուտներ  
արտադրելու հետամուտ, լրջախոհ  
միտքերու համար:

Այժմ ամենակ չէ՝ որ ամեն բա-  
նէ աւելի խորհինք, սկսինք խոր-

հիլ թէ ինչպէ՞ս պիտի գործենք  
ասկէ ետքը, ազգին մէջ տակաւ  
գոյացնելու համար բարոյական և  
նիւթական կարեւոր ուժեր, որ-  
պէս զի կարելի ըլլայ մեզի օգ-  
տուիլ այն նպաստաւոր հանգա-  
մանքներէն և բարեպատեհ առիթ-  
ներէ զորս անտարակոյս ապագան  
կը վերապահէ մեզի համար:

Զմոռնանք որ եթէ շարունա-  
կենք մեր բոլոր գործունէութիւնը  
սահմանափակել յանցապարտները  
որոշելու, պատասխանատուններ ու-  
րոնելու նեղ շրջանակին մէջ, մե-  
ծագոյն յանցապարտները պիտի  
ըլլանք մենք, ամենքս ալ պարող  
հայ սերունդը:

## Պ. ՖԷԼԻՔՍ-ԹՈՍԱՍԻ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անկախութեան սէրը տղայոց մէջ. —  
Կարելի է արդեօք որ ուսուցիչները  
կարողանան հնազանդեցնել աշակերտ-  
ները իրենց անձը պատկանելի ընծա-  
յելով:

Դ.

Ուսուցիչը պէտք չէ որ ի զուր  
վատնէ իր կարողութիւնը, կամ  
դէպի չալը գործածէ. պէտք է  
իշխանութիւն ունենայ աշակեր-  
տին վրայ, անձին տէրը լինի և  
հնազանդեցնել գիտնայ, եթէ ոչ  
կը թերանայ իր պաշտօնին մէջ:  
Ամենագիտար կէտն է գիտնալ թէ  
ինչպէս պէտք է հասնիլ այդ նը-  
պատակին առանց աշակերտին ար-  
ժանապատուութեան դպչելու, եւ  
կամ անոր անձնական ֆիաս մը  
հասցնելու:

Այս գիտարութիւնը որ յաճախ  
կը չափազանցուի, մեզնուազ մեծ  
պիտի թուէր, եթէ հնազանդու-  
թիւնը դիւրին ընծայելու միջոց-  
ներուն վրայ խորհէինք. և արդէն  
փորձուած բան մ'է որ մենք միայն  
անոնց կը հնազանդինք կամաւ,  
որոնք յաջողած են սիրելի և պատ-  
կառելի ընծայել անձեանին և ի-  
րենց բարեացակամութեամբ անձ-  
նութիւններուն և արդարասիրտու-  
թեան ոգին ներշնչել մեզ: Հոկա-  
ռակ դէպի անկախութիւն ունե-  
ցած մեր սաստիկ սիրտն, մենք  
կը տեսնենք ու կը զգանք ամեն

ատեն թէ ինչպէս կը հպատա-  
կինք հեղինակաւոր անձնաւորո-  
թեանց, որոնք արժանիք ունին  
աներևոյթ զօրութիւն մը դէպի  
անոնց կը մօտեցնէ զմեզ, և թէեւ  
հակամէտ և սիրահար իրենց ար-  
ժանեաց, բայց ոչ խոնարհ հպա-  
տակներ կը լինինք անոնց: Նոյն  
իսկ դէպի իրենց մօտենալը և մեր  
անոնցմէ հաւասարելու բնական իզ-  
ձերը մեզ դէպի յառաջադիմութիւն  
և ազնուացում կ'առաջնորդեն. հեռի  
կը լինին մեզմէ անձուկ մտածու-  
մները, և մենք մեզի աւելի սուղ  
կը գնահատենք: Ահա այս կէտին  
վրայ է որ դէմ առ դէմ կուգան  
և կը հաշտուին մեր իսկական ար-  
ժանեաց զգացումը, մեր անկա-  
խութեան բնաղբը և մեր հնազան-  
դութեան միտումը: Արդ, ակն  
յայտնի կ'երևայ թէ որպիսի յատ-  
կութիւններ ունենալու ենք, մեր  
տղաներէն ինքնաձին և արդիւ-  
նաւոր հնազանդութիւն մը սպա-  
սելու համար: Հնազանդութեան  
ոգին ազդելու, ներշնչելու է տը-  
ղայոց, և ոչ թէ իբր պարտք ծան-  
րացնելու է անոնց վրայ,

Երբ մեր իշխանութիւնը կը հաս-  
տատուի միանգամ, կը մնայ զայն  
օգտակար ընել զօրացնելով տը-  
ղայոց բարի կամեցողութիւնը երբ  
կը տկարանան, ուղղելով երբ կը  
չեղին, առաջ վարելով դէպի ինք-  
նադատութիւն երբ կը շփոթին,  
վերջապէս իրենց գործոց պատաս-  
խանատու բռնելով զիրենք, և պատ-  
րաստելով ազատ մարդիկներ և  
ոչ մարդամեքենաներ: Խաղի, կըր-  
թութեանց և դասարանի մէջ նա-  
խաձեռնութիւնը ձգենք իրենց  
վրայ. մեր ղեկավարութիւնը ու  
հսկողութիւնը սքողուած լինին. և  
բնաւ ուստիկանութեան մը կամ  
բռնապետութեան մը երեւոյթը  
չունենայ: Պէտք է տղայոց օգնել  
քան առաջնորդել: Միթէ մեզ ան-  
կարելի է քիչ մը նըբահայեցու-  
թեամբ և աւելի բարեացակամու-  
թեամբ հետամուտ լինել անոնց,  
որ ընեն մեր փափաքածը: Խըն-  
դիրը լաւ պատեհ առիթ գտնելն  
է անոնք լաւ բնազդներու վարժե-  
ցիկու և ազատ անհատներ պատ-  
րաստելու հաստատապէս: Յետոյ,

որպիսի՝ յոյսեր մեզ չընծայեր քա-  
լախրանքը և գրգռեւրը. երբ տղան  
քիչ մը ծանր դժուարութեանց կը  
հանդիպի, փոխանակ դիւրութիւն-  
ներ տալու ամեն ատեն, իր կորու-  
սիւն ու արժանապատուութեան կո-  
չում ընենք որ անձնավատահ լինի,  
և «պիտի յաջողի նա շատ անգամ  
եթէ կարենալու գիտակցութիւնը  
ունենայ»։ Բայց գրգռու տալը շատ  
մը պարագաներու մէջ աւելի ազ-  
դու է քան թէ քաջալերանքը.  
վերջապէս մէկ իօսքով կարող ենք  
ըսել թէ գրգռու ծանօթ ամենա-  
զօրեղ ազդակն է բարոյական կո-  
րովի և կամքի։ Գրգռելով մարդ  
մը կը հարկւրապատկենք անոր մէջ  
յաղթել կարենալու փափաքը, կը  
տեղծենք կամքը զայն ուրանալով  
եւ այս է կամքի խարխիւը աճումի  
համբուն մէջ. որովհետեւ տեսակ  
մը բարոյական սնունդ կը հաւաք-  
ուի հոն ամեն օր, և քիչ քիչ թա-  
քուն զօրութիւններ, որ տղան  
ինքն ալ չգտար և չնշմարեր, յան-  
կարծակի կարողութենէ գէպի գոր-  
ծունէութիւն նշաններն գրգռի  
մտքակի հարուածին տակ։

Վերջին ամենազօրեղ օգնական  
մ'է նաև բանականութիւնը զոր  
կարող ենք օգնութեան կանչել ա-  
մեն պարագայի մէջ, երբ ստիպ-  
ուած ենք հնազանդեցնելու համար  
միջամտութիւն մը կատարել, երբ  
ստիպուած ենք բան մը պահանջել,  
հասկնելով և ցոյց տալով մեր պա-  
հանջին օրինաւորութիւնը։ Տղան  
որ յաճախ կը փորձէ ըմբոստանալ,  
երբ կ'աշխատին խոնարհեցնել իշ-  
խանութեան լծին տակ, տեղի կու-  
տաք անտրտունը, երբ կը տեսնէ  
թէ բանականութեան առջեւ է որ  
կը խոնարհի։

Մ. Դեթուհի

ՎԵՐՋ

Ջ. ՈՒՐԻ ԹՆԴԻՐ

Ի ՌՈՒՍՃՈՒՔ

(Շար. երկրորդ քիւիսն եւ վերջ)

Միջուկ իսկ եթէ ապացուցուի թէ  
Լոմին եզերքը կամ հովտին մէջ փոր-  
ուած հորեր չընեն հաղորդակցութիւն  
Լոմին հետ, հարկաւ պէտք է ապացու-  
ցանել թէ այդ աղբիւրը մշտապէս պիտի  
ըլլայ երկար շրջանի մը մէջ։ Դարձեալ  
կը մնայ խղճմամբէն ապացուցանել թէ  
ջուրը՝ ճիշդ և ճիշդ քաղաքապետու-  
թեան պահանջած ջուրն է։

Էնթիկեթէն սկսեալ մինչեւ հասարակ  
պայտիզպանը գիտէ որ Լոմին եզերք-  
ները ո՛րք են տեղ մի քանի մէթրո գե-  
տինը փորելէ վերջ ըստ բաւականին  
մաքուր ջուր մը կ'ելնէ։ Հոս երկրա-  
բանական կամ էնթիկեթական խորին  
հմտութիւն չկայ բնաւ. ասիկա գիտ  
մը չէ եւ 100,000 Քր. վարձատրու-  
թիւն չափէ վեր շատ է։ Կրտսեր Սա-  
վէթը ինք կարող էր իր էնթիկեթներուն  
միջոցաւ այդ զիւրիւն հետազոտութիւնը  
կատարել, ան ալ միայն մի քանի հազար  
Քրանք ծախք մը ընելով։

Ռուստուկի համար ես կառավարկեմ  
իբրեւ աղբիւր Դանուբը։ Իրաւ Դա-  
նուբը ապականուած գետ մըն է, բայց  
չպէտք է նախապաշարուիլ, պէտք է

խնդրոյն վրայ նայինք գիտութեան տե-  
սակէտէն։ Տարակոյս չկայ որ աշագի  
փոքրաւորով Դանուբի ջուրը կը դառ-  
նայ կատարելապէս առողջ եւ համի,  
հոտի եւ գոյնի մասին խիստ գոհացու-  
ցիչ ջուր մը։ Այս մեքոսին ամենէն  
համոզիչ փաստը սա է թէ այսպէս մաք-  
րուած ջուր խմող քաղաքիւ քաղաք-  
ներու մէջ, Եւրոպա եւ Ամերիկա, ջուրի  
միջոցով տարածուած հիւանդութիւն-  
ներու յառաջ բերած մահերը խիստ փոք-  
րաթիւ են։ Այս առթիւ յարմար է յի-  
շել Լոնտոնը, որ իր ջուրը կ'ընդունի  
Թայմզ եւ Լի, երկու փոքր եւ աղտոտ  
գետերէն։ Այլ թո՛ւնա, որ իր ջուրը կտո-  
նէ Էյպպէն, ապականուած իբր 6,000,  
000 ժողովուրդի աղտոտութիւններովը.  
Պէտքն, որ կը գործածէ Հանտէլ եւ  
Սքըէ գետերուն ջուրը։ Պէտքն, որ  
իր ջուրը կ'ընդունի Օտէր գետէն, ուր  
կը թափին Սիլեզիայի եւ Կալիցիայի  
հանքային գաւառներու ամբողջ ան-  
մաքրութիւնները։

Իմ ծրագիրս հետեւեալն է։ Դանուբին  
ջուրը նախ կը բարձրացնենք ռեզի-  
ւոնաւ մը, շինուած Հապէրմանէ քիչ  
մը անդին, Դանուբի ամենէն ցած ջու-  
րէն իբր 20 մէթր բարձր գետնի վրայ.  
Հոս պղտոր ջուրը բաւական կը գտուի  
Այս ջուրը կ'ենթարկուի աւազի ֆիլ-  
թրասիօնի եւ կը հաւաքուի ուրիշ ռե-  
զիււոնաւ մը մէջ։ Ասկէ մաքրուած  
ջուրը կը բարձրացուի Դանուբի ամե-  
նացած մակարդակէն իբր 50 մէթր  
բարձր գոտեւղի եւ քաղաքին մէջ շին-  
ուած սեռովիս ռեզիււոնաւ մը։ Այս  
ռեզիււոնաւ պիտի բովանդակէ բա-  
ւական ջուր սպառումի օրական ելեւէջ-  
ներուն եւ հրեհի պահեստի համար։

Բաշխման գրութիւնը խիստ պարզ  
եւ խնայողական պէտք է ըլլայ։ Առ-  
այժմ մի քանի գլխաւոր խողովակի գը-  
ծեր, որոնք պիտի երկնաւան քաղաքին  
մէկ ծայրէն միւրը, եւ բաւականաչափ  
թիւ մը ջրմուղներու (hydrant) անոնց  
վրայ հաստատուած, յարմար տեղեր եւ  
իրարմէ յարմար հեռաւորութեամբ։ Երբ  
քաղաքին բնակչութիւնը աճի, փո-  
ղոցները քաջակի համեմատ շտկուին,  
բաշխման գրութիւնը հետզհետէ կը  
կատարելագործուի։ Մինչեւ որ քա-  
ղաքը ըլլայ a water closet town  
(եւրոպական արտաքնոցներով քաղաք)  
եւ չունենայ ականի ֆանալիզաւիօն, գոհ  
պէտք է ըլլանք մեր ջուրը երթալ փո-  
ղոցի ջրմուղներէն առնելու եւ ոչ թէ  
տուններուն առաջին կամ երկրորդ յար-  
կերուն վրայ զայն գտնելու։

Օրական 3600 քուպիթ մէթրո ջուրի  
համար աւազի ֆիլթրասիօնի գործերուն  
ծախքը մօտաւորապէս պիտի ըլլայ  
140,000 Քրանք։

Տարեկան գործառնութեանց ծախ-  
քերը, (գործաւորներ, աւազի եւ այլ  
հարկաւոր շինութեան ծախք, մասնա-  
գէտ էնթիկեթի մը թոշակը) պիտի ըլ-  
լան իբր 8000 Քրանք։

Աւաթիկ Ռուստուգի համար ջուրի  
մատակարարութեան աղբիւր մը եւ  
կերպ մը առանց մրցանակի, միշտ ա-  
պահով, առատ, խնայողական եւ ա-  
ռողջարար, նաեւ փոքր յաւելումա-  
կան ծախքով մը ընդարձակուելու ըն-  
դունակ։ Խոնարհաբար կը թելադրեմ  
որ քաղաքապետութիւնը Եւրոպայէն  
կանչէ մասնագէտ մը եւ քննել տայ  
այս ծրագրի առաւելութիւնները, ու-  
րիշ աղբիւրի եւ սխալի համար իր  
վերջնական որոշումը տալէ առաջ։

Թորոս Օ. Թորոսեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պուրկազ, 5 Սեպտ.

Քաղաքիս ազգային վիճակը շատ  
հեռի է միսիթարական երեւոյթ  
մը ունենալէ. ամեն ինչ անկեր-  
պարան ընթացքի մը մէջ է և չենք  
գիտեր թէ վերջը ուր պիտի յան-  
գի։ Նախկին թաղական խորհուր-  
դը մէկ անձի մը պատճառաւ հը-  
րաժարելու թուլութիւնը ունեցաւ.  
իրեն յաջորդեց մասնաժողով մը. և  
մասնաժողովին դարձեալ անյաջող  
թաղ. խորհուրդ ընտրութիւն մը,  
որ շտապեց նոյնպէս անմիջապէս  
իր հրաժարը տալ։ Հիմայ կանո-  
նաւոր թաղական խորհուրդ մը  
ունենալէ բոլորովին յուսահատ ենք.  
մի քանի անհատներէ բաղկացեալ  
ժողով մը կազմուած է, ազգային  
առօրեայ գործերը վարելու, և  
վարժարանի կենսական հարցը  
լուծելու համար։ Ասոր ալ յաջո-  
ղութիւնը անհաւանական է դըժ-  
բաղդաբար։

Քաղաքիս Տ. Հայրը յուսահա-  
տած Պուրկազի այս անկերպա-  
րան վիճակէն՝ կը լսենք թէ ար-  
դէն իր հրաժարականը զրկած է  
Պատրիարքարան և ինքն ալ հե-  
ռացած քաղաքէս։ Իբրեւ հիւր կը  
գտնուի հոս Տ. Գարեգին քահա-  
նայ Արծրունի, Բաղարճըզի նախ-  
կին քահանայ։

Մնեցեալ վարժարանական տարին  
փակուած է առանց քննութիւն  
տրուելու և վարժարանը աւելի ու-  
սուցիչներ ունեցած է քան թէ  
ուսանող, որոնք ցրուած են աւե-  
լի լաւ համարելով թափառել փո-  
ղոցները, քան թէ ուսումնական  
յարկի մը տակ գայթակղելի տե-  
սարաններու հանդիսատես ըլլալ,  
որոնք իրարու յաջորդած են վար-  
ժար. շրջանի տեւեղութեան մէջ։

Եթէ ուրիշ քաղաքներ իրենց  
ուսուցիչներ դպրոց. տարեշրջանի  
սկիզբը վարձել կը յաջողին, Պուր-  
կազի նախորդ թաղ. խորհուրդը,  
ուսուցիչ մը յուլիսի սկիզբը կը  
վարձէ, վարժարանի փակուած ժա-  
մանակ, 10 ամիս, շատ աժամ, 60  
լէվով։ Նորընտիր ուսուցիչը վար-  
ժարանի փակ ընկալէն օգտուելով  
իր կուսակցական դասախօսու-  
թիւնները կը շարունակէ անխոնջ  
եռանդով մը մի քանի որճարան-  
ներու մէջ։

Որքերու խնամակալ եռագլխ-  
եան ընկերութիւնը կայ և կը յա-  
րատէ, բայց ինչպէս կերելի, ան-  
գործունէութեան դատապարտուած  
է, վստահութիւն ներշնչել չի յա-  
ջողուին համար։

Վարժարանը փակ է և բացուե-  
լու ալ յոյս չկայ դրամի, մար-  
դու և աշակերտի պակասութեան  
պատճառաւ. խեղճ ծնողքն ալ յու-  
սահատած։ Ահա ձեզի ամենատը-  
խուր պատկեր մը ազգ. կեանքէն։

«ՎԱՂՈՒԱՆ ՁԱՅՆԸ»

ՀԱՆԴԵՍ ԱՄՍԵԱՅ  
Ա.ԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Լոյս տեսաւ այս հանդէսի ա-  
ռաջին թիւը, որմէ հետեւեալ տո-  
ղերը կարտատպենք, թերթին ուղ-  
ղութեան վրայ գաղափար մը տա-  
լու համար մեր ընթերցողներուն։  
«Յուզումի շրջան մըն էր որմէ  
անցանք։ Այլ ատեն է որ մտածե-  
լու վարժուինք։

Ազգային վերածնութեան, զար-  
թումի, փրկութեան խոչոր բա-  
ռերով չէ որ պիտի կարենանք ի-  
րականացնել վաղուան բանաւոր,  
ու լուրջ ու ամբողջական կեանք  
մը։

Բոլոր այդ վարդապոյն դրակա-  
նութենէն առաջ նախապատրաստ  
տական անհրաժեշտ գործ մը կայ  
ընելիք։

—Նախապաշարութեան, վատու-  
թիւններ, սխալ ըմբռնութեան, ա-  
հա ինչ որ ալ պէտք է ցրուել։

—Կարծիքներ, պղտորութիւն-  
ներ, դուհկութիւններ, անբրա-  
ւութիւններ, վայրագ եսամոլու-  
թիւններ, շնական անտարբերու-  
թիւններ, պոռնիկ չարութիւններ,  
— ամբողջ վաղնջական շէնք մեր  
Աղտոտ Բարքերուն, ահա ինչ ոք  
է՛ն առաջ պէտք է քանդել։

Տափակ քարոյ մը այս բոլորը  
... օհ, ձեր տխմար ժպիտը...  
Ու հոս է որ անիկա կը ցցուի մեր  
առջեւ, ծիծաղելի հսկան—հետա-  
պնդող ու անվկանդ—անապառ հայ  
իմաստակութիւնը։

Այս բարեբար քանդումի գոր-  
ծէն ետքն է միայն որ—Հայու-  
թեան բարոյական մակարդակը  
բարձրանալով—պիտի կարելի ըլ-  
լան սւ արդիւնաւոր բոլոր ազնու-  
ական ճիգերը արթնցնելու համար  
ազգային կորովը ու սկսելու շըր-  
ջան մը բանաւոր գործունէութեան,  
գիւցազնական անձնութեան, թիւ-  
րու ու սխալի խանդավառութիւն-  
ներուն։»

Երիտասարդ գրողներու խումբի  
մը աշխատակցութեամբ Մանչես-  
թէրի մէջ կը հրատարակուի Վա-  
ղուան Ձայնը որուն բաժանորդա-  
պիսն է ամեն տեղի համար 5 շի-  
լին, կանխիկ։

Հասցէն է.

S. Bartevian  
21, Brighton St. Oxford Rd.,  
(England) Manchester.

Թէ իբր զուտ գրական և թէ  
միանգամայն իբր հանրային բար-  
քերու ազնուացումին նուիրուած  
ձեռնարկ մաղթելի է որ Վաղուան  
Ձայնը ունենայ տեսական յաջո-  
ղութիւն։

ՌՈՒՍԱՀԱՅ ՎԱՐՈՒՄԱՆԵՐԸ

Նոր-Դարի մէջ կը կարգանք.  
«Մինչև օրս դիմեցողքի կողմից հայոց եկեղ. ծխական ուսումնարանները կանոնադրութեան մասին պաշտօնական այտարարութիւն չի եղած:  
«Նով. Օր»-ի ասելով, նորագոյց հայոց եկեղեցական ծխական ուսումնարանները ուսումը պիտի առաջ տարուի միևնույն ժամանակ երկու կողմէն: Երկու կողմէն երկու կողմէն ուսումնարանները ծխական կողմէն, միայն այն զանազանութեամբ, որ հայոց լեզուի դասաւանդութիւնը իւրաքանչիւր դասարանում լինելու է շաբաթական 6 ժամ:  
Այն ուսումնարանները, որոնք մի-միայն հայոց եկեղեցու հայտնուի են պահուելու, աշակերտները հայեր են լինելու, իսկ միւսներում, որոնց ծախսերի մի մասը կառավարութիւնն է տալու, կամ տեղական հասարակութիւնը, աշակերտները ապրի ազգից էլ կարող են լինել:  
Ուսուցչական կազմակերպութիւնը նոյնպէս հայերից է լինելու, իսկ երբ այդպիսիներ պահանջուած ցենզով որոշեալ քանակութեամբ չգտնուին, ուսուցիչներ կը նշանակուին նաեւ ռուս ազգութիւններէ:  
«Նով. Օր»-ին հաղորդում են որ ներքին գործերի մինիստրութիւնն իրաւունք է տուել ամենայն հայոց կաթողիկոսին դիմելու դատարանական հաստատութիւններին այն դէպքում, երբ, Նորին Օծութեան կարծիքով, լուսաւորութեան մինիստրութեան պաշտօնականները կը գրաւեն այնպիսի եկեղեցական ստացուածքներ, որոնք չեն պատկանում հայոց եկեղեց. ծխական փակուած դպրոցներին:»

ԼՐԱՔԱՂ

Ռուսահայ թերթեր կը ծանուցանեն թէ կաթողիկոսը իր պտոյտը աւարտելով մօտ օրեր պիտի վերադառնայ Էջմիածին: Ռուս թերթ մը կ'իմանայ թէ

ՀԱՅ ԱՐՈՒՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԻՇՆԱԿԱՆ ԶՈՒՅՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԷՋ

Հանդիսի Մայիս թուին մէջ ընկարագրած ենք թէ 1898ին՝ փրանկիսկոս Գովսէփ Կայսեր 50 ամեայ զահակալութեան առթիւ մեծամեծ հանդէսներ ու տօներ կը կատարուին այս տարի ի վիճինաւ Թոբեղանին բուն օրն է դեկտ. 2, և ոչ ինչպէս հայ թերթերու մէջ կարդացինք, Մայիս 7. այս վերջինս բացման օրն էր Զուգահան գիսին՝ որուն պիտի նուիրենք այս անգամ քանի մը տող:  
Զուգահանդէսը տեղաւորուած է ի Պրատէր, որ իւր սովորական հանդիսական տրամադրութեանց վրայ՝ աւելցուած է ցուցահանդիսի հրապոյրն ալ: Տրամվաններն, ելեկտրականներն ու նորաշէն երկաթուղին ամեն կողմանէ ամեն օր կը բերեն 30-40,000 հանդիսատես որոնց կը խառնուի տեղեկատուներն:

(\*) Բազում միեւնոյն վերնադրով յօդուած է մը, զոր Հանդէս անտօնայ հրատարակած է իր վերջին թիւին մէջ:

ն. Օծութիւն մտադրէ Բէթէրպօլի երթալ քանի մը դարձնու կարգադրութեան համար:  
—Տ. Վաղինակ վարդապետ Սիսակ-հան Հարթֆրտի եւ Նիւ Հէյլընի մէջ (Միացեալ Նահանգներ) 116 տարի հանգանակելով ի նպաստ որբերուն, զրկեր է այդ գումարը Բաղէշի եւ Նարբերդի որբանոցներուն:  
—Տ. Թօփրահանեան Ֆիլատէլֆիայի վերաբուժական վարժարանին չըջանը աւարտելով, նոյն հաստատութեան հիւանդանոցին վերաբուժական բաժնին մէջ օգնական-վերաբուժի պաշտօնին կոչուեր է:  
—Տիար Կ. Յ. Փափազեան ի Պօսթօն Տիգրիսի միջոցաւ սրտաբուի հրաւեր մ'ուղղած ըլլալով ամերիկացի Հայերուն՝ նիւթապէս նպաստելու անօթութենէ տառապող Զէյթունի, անմիջապէս հանգանակել յանձնախումբ մը կազմուել է որ սկսած է արդէն զրամական նուէրները ընդունելու Գովելի՝ եւ իրական յաջողութեամբ պըսակուելու արժանի ձեռնարկ:  
—Տիգրիս կը գրէ թէ Ամերիկայի հայ կամաւորներէն ձօրճ Մարթին որ Սանթիակոյի անեղ ճակատամարտին մասնակցած է, Ուսթըր դառնալով ընդհանուր ուշադրութիւն գրաւեր է իր կայտառ առողջութեամբ եւ զուարթութեամբ, վասնզի գրեթէ իւր բոլոր տեղացի ընկերները սոգունած ու կմախք էին դարձած: 12 րդ. զօրքանակի հայ զինուորներէն Լեւոն Հասըլճեան եւ կարապետ Մանուկեան իրենց ճարտար նշանաձգութեան համար պատուանշան ստացեր են: Ուրիշ կամաւոր մը Տ. Պետրոս Զանգալեան, որ արագընթացութեան մրցումներու մէջ քանիցս մրցանակ ստացած է, համբաւ հաներ է, գիշեր ատեն փախչիլ փորձող դասալիք զինուոր մը ձերբակալած ըլլալուն համար: Պետրոսի եղբայրը, Գէորգ, իր սպաններուն համակրութիւնը կը վայելէ իր յանգուզն գործերով: Զրահաւորի մը մէջ ծառայող հայ թնդանօթաձիգ մը ռմբակոծութեան ժամանակ եօթը անգամ իրարու ետեւէ նշանակէտին զարկած ու մեծ աւեր պատճառած ըլլալ

ալ առաջնորդելու համար իւր ընթերցողաց: Հարաւային դռնէն մտնելէն ետքը, մեր աչքը կը գըրաւեն 3-4 պաւիլիոններ՝ բոսնիական զարդերով ու շէնքերով, բայց մենք կը փութանք մեր սըրտին մերձաւորին, և անմիջապէս աջ զարնելով 10 քայլ հեռու ծառազարդ անցքի մը մէջ կը նշմարենք երկոտասանասիւն անցք մը և կը գիմենք ներս: Դռնէն իսկ կը կարգանք հայերէն տաղերով զրուած «Միլիթարեան տպարան» վերտառութիւնը՝ 5 1/2 կանգուն բարձր տաճարանման պահարանի մը վրայ: Իսկոյն կը գուշակենք, որ «հայ արուեստը» ներկայացնող մասն այս է Զուգահանդիսին. 16 կարճ ու հաստ սիւնակներու վրայ բարձրացած է այս պահարանն, որուն չորս երեսներն ալ ապակեայ կափարիչներու տակ՝ վիճինական Միլիթարեան տպարանին տպագրութիւնները կը ներկայացնեն: Բուն ճակատին վրայ՝ մասնաւոր պատրաստուած խորշի մը մէջ կանգնած է՝ Գեր. Ալանեանի և Գեր. Ա. Պալճեանի յօդուած մեծ երկրազունդը, որ 50 տարի ետքը (այսօր) դեռ զարմանք կը պատճառէ

լալուն համար, պատուանշան ստացեր է: Մովակալը այս առիթով ըսեր է հայ նաւագին. «Փանի որ Հայերը ասանկ զաւակներ կը ծնին, արժանի են ազատութեան»:  
—Մշակի մէջ ցաւօք կը կարգանք թէ Ախէնի (Գերմանիա) համալսարանին բնօթէսօր և նոյն թերթին հրատարակիչ Տ. Անդրէաս Արծրունի թոքի հիւանդութեամբ մը կը տառապի, որ բուական լուրջ հանգամանք ստացած է: Գերմանական թերթեր յաճախ տեղեկութիւններ կը հրատարակեն հայազգի բնօթէսօրին վիճակին վրայ: Տ. Արծրունի այս առիթով բազմաթիւ նամակներ կը ստանայ իր ծանօթներէն և բարեկամներէն. ի մէջ այլոց նամակ մը ալ ստացած է վիրիսով: Իր նախկին աշակերտներէն շատերը մեծ հոգածութիւն ցոյց կուտան իրենց երբեմնի ուսուցչին:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՁԴ

Մեր այն բաժանորդներէն որոնք մինչև այսօր չեն վճարած իրենց բաժնեգինը, կը ստիպուինք խնդրել որ հաճին յիշել թէ արդէն տարեշրջանին իններորդ ամսուն մէջ կը գտնուինք և թէ բաժնեգիններու վճարման այսքան երկար յապաղումը զգալի վնաս մը կուտայ մեզ, առանց իրենց տալու ու եւ օգուտ: Թող փութան ուրեմն անյապաղ վճարել իրենց պարտքը:

այցելուած արուեստին ներութեամբ: Թէպէտ այցելուած շատ քիչերը կրնան գնդին վրայի քաղաքներու հայերէն անունները կարդալ, սակայն մեծն ու փոքրն առանց ակնարկ մը նետելու և գոնէ վայրկեան մը զննելու յառաջ չերթար: Առաջակողմեան երկու եզրանկիւնները կանգնած են երկու փոքր գնդերը՝ նոյնպէս հայերէն տպագրութեամբ, երկնագունդն ու երկրագունդը, որոնք մէյ մէկ պահպան ունին, ահաւոր-փայտաքանդակ առիւծներ զրգուած վիճակին մէջ, միշտ պատրաստ կարծես, հայ գնդերը չօչափողին մահ սպաննալու: Մեծ երկրագնդին բովերձ՝ ապակիներու տակ ի ցոյց դրուած են հայերէն աշխարհագրական ատլասներ. աշխարհագրագին կից երեսին վրայ՝ մեր տըպարանն այսօր տպագրուող 24 լրագիրներն ու պարբերագիրներն, որ շարուած են Հանդէս Ամսօրեայի շուրջը, և իւրաքանչիւրը զարդարուած է կամ յորեւիտարին պատկերով և կամ յարմար դրուագով մը: 12 սիւններու վրայ կը բարձրանայ պահարանին երկրորդ յարկը, որ ապակեայ զարանեւ

ԼՕԹԵՏԷՆ ՊԵՐԻՏԷՆ

—Մ. Ամերիգանընըն հիւմհուրիթթ ընդիսի այ պէ այ մաաշ օլարադ 4166 տօլարըդ (20900 ֆրանք) պիր չէք մալիյէ նէզարէթինտէն գապուլ իտէր:  
—Բարիս էհալիսինն եալընըդ 12 տէն պիրի սարի միլլէթ ու թէպաստան տըր:  
—Պէրլին էհալիսինն 100 տէ 37 սի սարլ Սլման օլուպ, տիկէրլէրի սարի միլլէթլէրէ մէնսուպ սըրլար, Պուրատա եալընըդ հէքիմ ֆայթօնլարը արիկէր ֆայթօնլարտան իլէրի կէշմէկէ մէկընն սըր:  
—Լօնտրատա հէր կէճէ 6000 ֆուգարա սօզագտա եաթարլար, վէ հէր հաթթա 2 տէմ աճըլգտան էօլլուր:  
—Երուսաղէմին 60,000 էհալիսի վար տըր. 20 տէնէ էվլէլ պուրն նըսֆը գատար ըտր:  
—Թայմը նէհիի Լօնտրանըն էօնիւնտէն ագմագտա օլուպ, կիւնտէ 500 վարօր տիւնեանըն հէր թարաֆընա կիթմէք իչիւն հարէքէթ իտէր:  
—Գաթօլիկ քիլիսէսինն 1897 տէնէսինտէ 59 կարտինալը վար ըտր. պուրլարն 32 սի իթալիալը, 4 իւ Ալման, 4 իւ Ֆրանսըդ, 4 իւ Սպանիօլ, 4 իւ Աւստրիալը, 2 սի Հունգարիալը, 2 սի Փօրթուգալը վէ պիրէր Պէլճիգալը, Բուլթէն, Ինկիլիդ, Իրլանտիալը, Գանատալը, Ամէրիգալը վէ Աւստրալիալը տըրլար:  
—Տիւնետա էն չօգ գաթիլլէր իթալիատան վէ էն չօգ նէֆսինէ սուի գաստ իտէնլէր Բուսիատան չըգարլար:  
—Կիւզէլ պիր Արապիսթան աթթէլէօլտէ — եազըն 24 սաաթ, գըլըն 48 սաաթ — սու իչմէքսիլիդ գօշա պիրլուր:  
—Բարիսիլլէր թէաթթօլարտա մէմ նուրիյէթսիլլիք պէյան իթմէթ իչիւն, ըսլըդ չալարլար. Ինկիլիլլէր՝ ագսիօլարագ, մէմնուրիյէթ ու մէսէրէթթ իպրազը իչիւն ըսլըլարլար:  
—Ալմանիանըն միլլի մէքթէպլէրինտէ 100 պինտէն զիյաաէ քէքէլէմէքլէ սէօլլէյէն գըդ վէ էրքէք չակիրտան վար տըր:

րու մէջ կը պարունակէ այլ և այլ լեզուաւ եղած տպագրութիւնները՝ փառայեղ կազմով, Սիւներու խոյակներն իբր պատուանդան կը ծառայեն 4 եռանկիւններու, որոնց անկիւնախորշերու մէջ զետեղուած են՝ վիճինական Միլիթարեանց Արեւհարց յատուկ զինանշանները: Սիւնէն ծայրը կը տեսնուի՝ 8 սիւներու վրայ բարձրացած գմբէթ մը, հայրապետական զարդախաչով պսակեալ:  
Ոչ թէ միայն պահարանին շէնքը, այլ նաեւ ներկն ալ ըստ ամենայնի ձեռագրաց մանրանկարներու համապատասխանող գոյններով յօրինուած է, և այս երկրորդ յատուկութեամբ կը ներկայանայ պահարանն իբրեւ գեղեցիկ գործ մը հայկական արուեստի և ամեն իրազեկ արուեստագէտներու հաւանութեան արժանացած է: «Դրաֆիլէս Զեկքարալար» մասնագիտական թերթն այս պահարանի մասին կը գրէ. (Թ. 12, 1898) «Այս փառայեղ պահարանը վիճինայի Թոբեղին-ցուցահանդիսին մէկ զարդն է:»

—Բարիստէ 26, 800 տէն գիշատէ Ալմանիալը մէջմուտ, Պէրլինտէ իսէ Ֆըրանսըզլար 4-500 քիլոտէն իսարէթ տիրէր:

—Լօնտրա պիտանայէրինտէ 100 պիտանայ գիշատէ խըղմէթնի 20 տէն 35 եալընտա գըղլար պուլընը, պուլնալըն 400 տէն գիշատէսի բարաս գըղլարը, եէկէնէրի վէ գըղլարտալարը տըրլար:

—Պալէրիանըն Նիւրէմպէրկ շէնրինտէ 1080 սէնէսինտէ եարըլմըն օլան էվէր էլան հալլէրի իւզրէ գալմագտա տըրլար:

—Բիւրքէի արզըն (եքրագոնտ), գուրը գըմընըն իւշտէ պիւրի օրմանլըլար ինայթէ իթմիշ տիր:

—Աւստրիատա վէ Ալմանիատա աշնըլը իշին 160 մէթըլէպ օլուպ, պէօյիւք օթէլէրին աշնըլարը շահատէթնամէյէ հայիգ օլմալը տըրլար:

—Պրանսատա 2150 գատըն միւէսսիւլէր (հեղինակուէի) վէ մուհարրիէլէր վար տըր, պուլնլարտան պիւրի բօման եազանլար, 200ի շարիլէր (բանաստեղծուէի), 150սի թալիմ ու թէրպիլէյէ միւթէպիւր էսէրլէր եազան, վէ տիկէրլէրի տախի սաիր շէլլէր թէէսիս իտէնլէր տիր:

—Պիւ սէնէ գարֆընտա 300 գատար ինկիլիզ վարօրլար վէ կէմիլէր գարգ ու զայպ օլուլար:

—Արթանթին հիւքիւմէթի ճիւմուլընէսինտէ (շիմալի Ամէրիկա) 20 տէն 80 եալընտա էվէնմէմիշ օլան էրքէլէրէ մախսուս վէրկի թալիսիս օլընմըն տըր, էվէնսիլի կիւն պու վէրկիտէն վուաֆ թուրըլը:

ՊՈԻԼԿԱՐԼԱՐ ԱԹԱՆՊՈԼՏԱ

Սթանպուլտա եէնի եարըլմըն օլան Պուլկար պէօյիւք քիլիսէնին թագտիս այինի պու սալը կիւնիւ սուրէթի մուլթանթանէտէ իծրա օլընտը, այինի բուհանիի էքսարք պիզզաթ իծրա իթմիշ տիր, Պուլկարիատան վէ Մարքէթնիատան սէքիզ եպիսկոսլար տախի հալըր պուլընմըլար: Ֆէխամէթլու Բըրէսէ վէքեալէթէն վէ Պուլկար հիւքիւմէթի թարաֆընտան Մ. Մարքօֆ վէ բուս սէֆարէթհանէսի թարաֆընտան մէմուրլար վէ մախսուս Պուլկարիատան կիտէն վէ եէրլի պինլէրճէ էհալի հալըր պուլընտըլար:

Քիլիսէնին թագտիս այինի խիթամընտան սօնրա, Բրէնսէն Մա. րիա Լուիզա հաղըթթլէրինին եէվմի վախսուսի օլմագ մինասիպէթի իլէ տուալար օգուլտը, քիլիսէ խիթամընտան սօնրա տախի էհալի մէսէրրէթլի նիւմայիշէր իծրա իթտի:

Էօյլէնտէն սօնրա տախի մախսուսի զիյաֆէթ քէշիտէ օլընուպ, էքսարք վէ Մ. Մարքօֆ վէ սա. իր զէվաթը քէրամ հալըր պուլընտըլար, պու մինասիպէթլէ վա. թանբըրվէրանէ նուլթլար իրատ օլընտը:

Մէղքիւր քիլիսէնին թագտիսի այինինէ հալըր պուլընմագ իշին Պուլկարիատան պինլէրճէ էհալի կիտէնէք զանըն իլէ, Սթանպուլտա բուս վէ Պուլկարար պէնինտէ պիւր գարընըլը գուհուրա կէ-

մէմէսի իշին Սուլթան պիւր իրա. տէ չըգարուպ, եէվմի մէղքիւրտէ Պուլկարիատան չօգ էհալի Սթան. պուլ կէլմէսինի մէնն իթմէք իս. թէմիշ: Սուլթանըն պու էմրի Պապը Ալի պիւր նօթ իլէ Մ. Մար. քօֆա պիլտիլմիշ իսէ տէ, Մ. Մար. քօֆ ճէվապէն՝ մէղքիւր էմր կէրի ալընմագ իսէ Պուլկարիա վէ թիւր. քիւ պէնինտէ միւնասէպաթը տօսթանէ պօղուլաճաղընը պիլտիլ. միշ տիր: Վէ պուլնըն իւզէրինէ Պուլկարիատան «Պուլկարիա» վա. բօրը իլէ կիթմիշ օլան եիւլլէրճէ էհալի այլըն 7 սինտէ սէրպէսթճէ Սթանպուլտա չըգուպ, այինի մէղքիւրէ հալըր պուլընմըլար տըր:

ԿԻՐԻՏ

Թաւըն մուլպիւրի Գանտիա շէհրինի՝ վուգուլթտան սօնրա, կէզուպ, հէր շէյի թէտըզ իթմիշ օլարագ՝ մէթթուպընտա տէ. միշ տիր: «Շէհրի պիւր տէֆա կէ. զուպ կէօզտէն կէշիլէն ալըգտա կէօրէնէք քի իսթիլալըն, եանկըն. լարըն վէ գըրկընըն մէթուլիլթի ռամմէթէն թիւրք հիւքիւմէթի իւ. զէրինէ աղըրալըն: Խրիսթիյան էվէրինտէն պիւրի գալմամըլ. պուլն. լարտան պիւր թագըմը գաշամա. յուպ, իսլամլարըն էվէրինէ սը. ղընմըլար:»

Գանտիա վուգուլթընը թէտ. զըզ իթմէք իշին Պապը Ալի պիւր մուլթէլիթ գօմիսիօն թէէքիլ ի. տիլմէսինի թէքիլիթ իթմիշ տիր. ա. միւրալար պու թէքիլիթ իլէտա իթ. տիրէր:

Պինսէն ալէյհ կիրիտ մէսէլէ. սինին հալը տէօրթ պէօյիւք տէվ. լէթլէրին իթթիֆագէն վէրէնէկի գարարա միւսթէնիտ օլաճագ տըր:

Գօմանտան Էթէմ բաշա Գան. տիատա պիւր իլան նէշր իտուպ, Սուլթանըն էմրի իւզէրէ սիւհալար գօմիսիօնը մախսուսա թէսիլմ օ. լընմասըն էհալիլէ իսթար իթմիշ տիր. պու իլան իւզէրինէ չօղլար թէսիլմի սիւհա իթմէքտէ օլուպ, էվէլէքի կիւնէ գատար 1600 սիւհա թէնէմմիւ օլընմըն տըր:

Ինկիլիզ գօնսօլըն Գանտիատա պուլընան իսլամլարըն մուհաֆա. զասընը ինկիլիզ տէվլէթի տէրէօհ. տէ իթմիշ օլտըլընը խրիսթիյան. լարա պէյանլէ, իսլամլարա գարըն հէր նէվ թէնագիւլաթ ինկիլիզ տաքէրինէ գարըն թէնագիւլ սա. յըլաճաղընտան՝ միւթէնասիլէրին շէտիտէն միւնագաթ կէօրէնէկինի պիլտիլմիշ տիր:

Ինկիլիզ ամիրալը քէնտի գսվ. վէի տաքէրիլէսի իլէ Գանտիայը թէսքին իտէպիլէնէկինտէ՝ տիկէր տէվլէթլէրին տաքէր վէ վարօրլա. ընա իզթիլա գալմատըլընը պէ. յան իթմէսի իւզէրինէ, բուս, ի. թալիա վէ ֆրանսըզ տաքէրլէրի վէ վարօրլարը Գանտիատան շէր. լուպ Գանտիայ կիթմիշէր տիր:

Աթանա վօլթըն ալտըլը մալիւ.

մաթա կէօրէ, թիւրք տաքէրլէրի տախի Գանտիատան շէքիլէնէքլէր վէ շէհրի ինկիլիզ տաքէրի իսթիլա իտէնէք իմիշ:

Պիւր վագըլթտան պէրու բուս տաքէրլէրին ինղըպաթը ալթընտա պուլընան Բէթիմն շէհրինտէ տա. խի իսլամլարտա պիւր գանալըգ. լըզ հըս օլընմագտա օլտըլընտան վէ պուլաւտա տախի պիւր իսթի. լալըն վուգուլիտէն գօրգուլմագ. տա օլմաղլէ, մահէլին բուս գօ. մանտանը՝ պիւր վուգուլթ զուհուր իտէր իսէ շէհրին թիւրք միւթէ. սարըֆընը մէսուլ թուլթաճաղընը իսթար իթմիշ. Գանտիատան Գա. լատաղըն ժանտարլար բուս գուվ. վէթինի գալիլէշտիլմէք իշին Բէթիմնայ կիթմիշէր:

Գանտիատա վէ Բէթիմնտա պուլ. ընան էնէպի գապիթանըն ֆա. միլեալարըն տատտան մուֆարէքթ. լէ քէնտի վաթանլարընա կիթմէք. տէ տիրէր:

Պու հարէքիաթ տատտա տէհ. շէթլի պիւր իսթիլալ տաշա չըգա. ճաղընա տէլիլ տատ օլընապիլիլ:

Բօմանտան վէրիլէն հալմատիսէ կէօրէ, կիրիտտէ պուլընան իթա. լիա գօմանտանը Ամիրալ Գանէվա. րօ՝ կիրիտ իշլէրինտէ տիկէր ամի. րալարտան զիյատէ սէլահիլէթ. տար օլմաղլէ, ալթը պէօյիւք տէվ. լէթլէր միւթթէքիլէքէն թիւրք տա. քէրինին կիրիտտէն շէքիլմէսինի գաթիլէն թալէպ իթմէք իշին ըՍ. թանպուլա միւրաճաթ իթմէլէրինի գապինլէրէ թէքիլիթ իթմիշ տիր:

Ամիրալըն պու թէքիլիթ մէհա. ֆիլի սիյասիյէտէն ալըլընմըն տըր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Ֆիլիլին տալարընտա եէրլիլէ. րին հարէքիաթը Ամէրիգալըլարա գօրգու վէրմէքտէ օլտըլընտան, եէնիտէն Մանիլայա տաքէր նաղլ օլընմագտա տըր. Սան Ֆրանչիս. քօտան 5 ալայ տաքէրէ Մանիլայա կիթմէք իշին էմր վէրիլտի:

—Ժընէվտէ իթալիալըլարտան 10 քիլի տէրտէսթ օլընմըն, զաննա կէօրէ՝ պուլնլար իմբէրաթօրիցայը գաթլ իտէն Լիւքէնին րէֆիլէ. րինտէն իմիշէր:

—Անարշիսթլէրի թաագիպ իթ. մէք իշին իթալիանըն թէքիլիթ իւզէրինէ սաիր տէվլէթլէր պէյ. նինտէ միւլաքէրէ ճէրէնան իթ. մէքտէ տիր. տէվլէթլէրին պիւր գալը օլ թէքիլիթ մէպտէն գապուլ իթմիշ օլմաղլէ, ումուլէն իթթի. ֆաք հուսուլա կէլմէսի եազըն կէօ. րիւլիլյօր:

—Պօրտօտան ալընան պիւր թէ. լէկրաֆա կէօրէ, եէնի ինշա օլըն. մըլ օլան Նաւտիթնա (յոյա) պուլ. կար վարօրը Լօրմանտա էվէլէքի կիւն տէնիպէ էնտիլիլմիշ տիր:

—Էքօ ուր Բալիլին պէյանընա նաղլարէն, վիլէնատաքի ֆրանսըզ սէֆիլի Մ. Բէվէրգօ Սթանպուլա սէֆիլ թային օլընմըն, վէ Մ.

Գամպօն իսէ այնը մէմուրիլէթլէ Լօնտրայա կիտէնէք իմիշ:

—Տրէյֆիւսին տալա քեաղըն. լարընը թէտըզ ու թէղէքէրէն ալմագտա օլան գօմիսիօնը մախ. սուս բազար իրլէսի կիւնիւնէ գա. տար խըտմէթինի իքմալ իտուպ, իսթիհսալ իթթիլի նէթիճէյի մէհ. լիսի վիւքէլայա թագտիլմ իտէնէք տիր:

—Բօմանըն 1870 տէ իթալիա տաքէրլէրինտէն իսթիլա օլընմասը. նըն այինի սէնէվիսի իծրա օլընա. լագ, շաշալը վէ վաթանբէրվէ. րանէ նիւմայիշաթ իտիլմիշ տիր:

—Իմբէրաթօրիցանըն գաթիլի իթալիալը օլտըլը սէպէպլէ, թը. րիէսթէտէ էհալի իթալիալըլարա գարըն թէնագիլթաթտա պուլըն. մագտա օլուպ, վիլէննա էլիլիս խարիճիլէ նաղըրը Գօնթ Կօլու. խօվսթիլէ թէնէքիլտէ միւրաճաթ իտուպ, ուլկուլնըլըլըլարա նի. հայէթ վէրիլմէսինի թալէպ իթ. միշ, նաղըր էլիլիլ թէմին իտէ. րէք, իմբէրաթօր տախի պու պապտա էմիրլէր վէրմիշ օլտըլը. նը պիլտիլմիշ տիր:

Թրիէսթ միւթէսարըֆը տախի իթալիա գօնսօլընա կիտուպ, աֆիլընը իսթիլհամ իթմիշ տիր: Պիւր թագըմ իթալիալը ինկիլէր էհալինին թէնագիլթաթնտան գօ. գարագ Աւստրիատան գալմագ մէնպուր օլմըլար: Պուլնլար սէօյ. լէյօրլար քի թրիէսթի զօգաղլա. ընտա իթալիալըլարա գարըն տէհ. շէթլի մէնգարլէրէ ալըլմըն, էհա. լի «գաթիլլէր էօյիլն» պաղըրըր մըլը:

ՉԱՍԻՐԷ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա, 1 Սեպտեմբեր  
Պուդսայ  
Վալոն, լիպրա 55-58 հէք 9. 10-9. 80 ֆր  
Արապա, 55-60 հէք, 9-12:  
Արա  
Լիպրա 42-50 հէք, 5-5. 80 ֆր:  
Ֆաւուրիս  
100 օգ. 15-21 ֆր. մալընա կէօրէ:  
Եուլաթ  
Արապա 20-25. ֆիյաթ 4-4. 40 ֆր.  
Տար  
Արապա 5-6. լիպրա 58-60. ֆի. 4. 60-5.  
Կիւնտէ 300-350 արապա վէ 8-10  
Վալօն պուլղտայ, 100-120 արապա  
արա կէլմէքտէ տիր:  
Ֆաւուրիս 70-80 արապա  
Արապա մուսմէլէսի Նաբօլէօն 21 ֆր.  
հիսապ իլէ:

Ա Ձ Դ

Շապին-Գարահիսարի Չըրտախ գիւղացի Դանիէլ Խօնիկեան անուն 40 ամեայ ազգայինը, 14 տարի առաջ հայրենիքէն հեռացած՝ 9 տարի առաջ Պուքէշտի մէջ շաքա. րագօրծուլթեամբ կ'ըլաղէր: Ով որ գիտէ այս անձին հիմա ուր գտնուիլը, թող հաճի իմացնել «Իրաւունք»-ի խմբագրութեան:

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Ա. Թաղ «Քննազօքա» փողո. ցին մէջ Տիար Թօմա Տիմիթրօֆի 400 թիւ տունին տակը գտնուող խանութը վարձու կը տրուի: Փա. փաքողները թող գիմեն տանտի. րալը:

Отговорникъ М. СКОЛОВЪ  
Печатница „Взаимность“—Варна